ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ ՍԻՐՈ ԵՐԱԶԱՆՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ Է

Քրիստոսի քաջ զորական եւ վկա Սուրբ Սարգիսը Հայաստանին սահմանակից Կապադովկիայի Կեսարիայի կողմերի բյուզանդացի էր:

Սուրբ Սարգիս զորավարը իր որդու՝ Մարտիրոսի եւ 14 քաջ մարտիկների հետ նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի:

Արիության համար Սուրբ Սարգիսը Մեծն Կոստանդիանոս կայսեր (285-337) կողմից կարգվում է իշխան եւ սպարապետ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում: Նա ոչ միայն գերազանց սպարապետ էր, այլեւ հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր հոժարությունից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում է մեհյաններ, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեությունը: Երբ Հուլիանոս Ուրացողի թագավորության օրոք (360-363) սկսվում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, Սուրբ Սարգիսը, աստվածային հայտնությամբ հրաման առնելով հեռանալ կայսրության սահմաններից, իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստանի վրա, Հայոց արքան, ձգտելով իր երկիրը զերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգսին ծառայության անցնել Շապուհի մոտ:

Շապուհը սիրով ընդունում է Սուրբ Սարգսին եւ նշանակում նրան զորագնդերի հրամանատար: Զորականներից շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայած նվիրումն առ Աստված, իր աղոթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում էին հեթանոսությունից եւ դառնում քրիստոնյա: Սակայն, Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը եւ զոհ մատուցել: Զորավարն անմիջապես մերժում է այն՝ ասելով. «Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, Ով ստեղծել է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնե աստվածներ չեն, հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»: Այդ խոսքերից հետո, Սուրբ Սարգիսը կործանում է բագինը: Զայրացած ամբոխը հարձակվում է Սուրբ Սարգսի եւ նրա որդու վրա: Առաջինը նահատակության պսակն ընդունում է նրա որդին՝ Մարտիրոսը: Սուրբ Սարգիսը բանտարկվում է եւ, աներեր մնալով իր հավատքի մեջ, գլխատվում: Նահատակվելուց հետո, Սուրբ Սարգսի մարմնի վրա լույս է ծագում: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաեւ Սուրբ Սարգսին հավատարիմ տասնչորս զինվորները: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում են Համիան քաղաքում:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը Սուրբ Սարգսի մասունքները բերում է Կարբի (Աշտարակի շրջան)՝ տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի:

Առաջավորաց պահք

Սուրբ Սարգսի տոնին նախորդում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված Առաջավորաց պահքը: Պահքը տեւում է հինգ օր (այս տարի՝ հունվարի 18-22-ը ներառյալ):

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՆ

Գերագույն պատվի
արժանացար՝
Բարեխոսելու
Բանն Աստծուն,
Աղոթքի՛ ընդունող,
Խնդրանքների կատարող,
Արագահաս
Սո՛ւրբ Սարգիս,
Բարեխո՛ս մեր անձերի
համար ի Քրիստոս:
Նրան՝ Բարձրյալին,
վայել է փառք, իշխանություն
եւ պատիվ,
Այժմ եւ միշտ եւ
հավիտյանս հավիտենից,
Ամեն:

Սուրբ Սարգիս. երիտասարդների եւ սիրո բարեխոս

Սուրբ Սարգիսը հովանավորել է Սասունցի Դավթին եւ Սասնա բոլոր հերոսներին ոչ միայն ռազմի դաշտում, այլ նաեւ սիրո մեջ:

Սուրբ Սարգիս Զորավարի տոնը հայությունը նշում է ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլեւ ժողովրդական սովորույթներով, որը նվիրական ավանդություն է: Սուրբ Սարգիս զորավարը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն աղոթում են Սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված: Սուրբ Սարգիսը սիրո երազանքն իրականացնող Սուրբ է:

Սուրբ Սարգսի մասին բազմաթիվ ավանդապատումներ կան: Ահավասիկ դրանցից մեկը:

Աղքատ Աշուղ Ղարիբը սիրում է մի մեծահարուստի աղջկա՝ Շահ-Սանամին: Վերջինս եւս սիրում է նրան, բայց Աշուղն աղքատ էր, եւ աղջկա հայրը արգելում է նրանց ամուսնանալ, քանի որ մտադրված էր նրան կնության տալ մի մեծահարուստի: Աշուղ Ղարիբը որոշում է մեծ կարողություն կուտակելու համար գնալ օտարություն՝ աշխատելու: Սակայն, մինչեւ այդ, Աշուղ Ղարիբն իր սիրած էակից խոստում է առնում՝ յոթ տարի սպասել իրեն: Պայման է դնում, որ, եթե ուշանա անգամ մեկ օր, աղջիկը թող ամուսնանա հոր ցանկությամբ:

Այդ յոթ տարիները շատ դժվար են անցնում Աշուղ Ղարիբի համար: Նա զրկված էր իր գեղեցկուհուն տեսնելու հնարավորությունից, որեւէ լուր չուներ նրա մասին, սակայն կարոտով էր սպասում այն օրվան, երբ նրանք կհանդիպեն, ընտանիք կկազմեն եւ ամբողջ կյանքը կապրեն միասին:

Յոթ տարի շարունակ գիշեր ու զօր աշխատելով՝ Աշուղ Ղարիբը կարողություն ստեղծեց եւ տունդարձի ճամփան ընկավ: Ճանապարհը լի էր փորձանքներով եւ խոչընդոտներով: Թվում էր, թե Աշուղ Ղարիբն իր հույսը պետք է կորցնի. չի հասնի իր սիրած էակին: Նա ազնիվ սրտով եւ արդար մտքով աղոթում է Սուրբ Սարգսին՝ հայցելով արագահաս Սրբի օգնությունը:

Սուրբ Սարգիսը, լսելով սիրահարված Աշուղի աղոթքը, իր արագահաս ճերմակ նժույգով բարձրացրած մրրիկի մեջ իսկույն հայտնվում է, Աշուղ Ղարիբին նստեցնում ձիու գավակին եւ մեկ ակնթարթում հասցնում Շահ-Սանամի մոտ: Աղջկա հայրը, տեսնելով Աշուղ Ղարիբի կամքը, կատարված հրաշքը, նրանց անկեղծ սերն ու նվիրվածությունը, օրհնում է երկուսի միությունը:

Ժողովրդական սովորություններից է, երբ Սուրբ Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Այդ օրը հիշատակելի սովորություններից է փոխինդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Սուրբ Սարգիս զորավարի ձիու պայտի հետքին: Ըստ ավանդույթի, Սուրբ Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի եւ ում մատուցարանի մեջ դրված ալյուրի կամ փոխինդի մեջ թողնի իր սպիտակ (մաքրություն, անաղարտություն է խորհրդանշում) ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա երիտասարդի երազանքը:

Տոնի առթիվ սիրահարված երիտասարդները միմյանց բացիկներ ու քաղցրավենիք են նվիրում:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ, Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր: Այս տարի այն կնշվի հունվարի 23-ին: Այդ օրը Սուրբ Սարգիս Զորավարի անունը կրող եկեղեցիներում կմատուցվի Սուրբ պատարագ, որից հետո կկատարվի երիտասարդների օրհնության կարգ:

Այդ օրը Վրաստանի Հայ Առաքելական եկեղեցիներում, ավանդաբար, միջոցառումների ընդարձակ ծրագիր է նախապատրաստել Վիրահայոց թեմը:

Այսօր՝ հունվարի 23-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում կմատուցվի Սուրբ պատարագ՝ նվիրված Սուրբ Սարգիս զորավարի տոնին:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ «ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ» ԵՐԿՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Այդ օրը Սուրբ Սարգսի ավանդական աղի բլիթները բաժանվեցին երկրի գլխավոր՝ Իվ.Զավախիշվիլու անվան համալսարանի երիտասարդներին:

Պետհամալսարանի՝ «Երիտասարդական կենտրոնի» նախաձեռնությամբ, կայացավ Հայ Առաքելական եկեղեցու Սուրբ Սարգսի տոնին նվիրված միջոցառում:

- Այս միջոցառումը շատ կարեւոր է երկրի ազգային փոքրամասնությունների հոգեւոր մշակույթի ճանաչման առումով,- այս միտքն էր հնչում համալսարանի «Երիտասարդական կենտրոնի» ղեկավար Կախա Գաբունիայի, համալսարանի պրոռեկտոր Դարեջան Թվալթվածեի, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Նանա Գափրինդաշվիլու, վրաց լեզվի նախապատրաստական ծրագրի՝ վրաց լեզվի դասախոս Զոյա Մխիթարյանի ելույթներում:

Միջոցառմանն աջակցել էր Թբիլիսիի «Հայարտուն» մշակույթի կենտրոնը՝ ղեկավար Լեւոն Չիդիլյան գլխավորությամբ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑՆՈՒՄ Է ՄԵԿԸ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ

Խորագիրը վարում է աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության հասարակության հետ կապի դեպարտամենտի պետ, Վրաստանի հեռուստահաղորդումների խորհրդական ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:

Հարց. *Վրաստանի նախկին բարձրաստիճան պաշտոնյայի կին եմ: Խնդրում եմ պարզաբանել՝ ո՞ր օրենքից ելնելով է նշանակվելու հոր մահվան կապակցությամբ իմ անչափահաս երեխայի թոշակը: Նման դեպքերում, գործո՞ւմ է, արդյոք, պետական թոշակի վերաբերյալ Վրաստանի օրենքը:*

Ի.ՄԱՆԱՍՅԱՆ

Բաթումի

Պատասխան. Վրաստանի նախկին բարձրաստիճան պաշտոնյայի մահվան կապացությամբ, նրա անչափահաս երեխային նշանակվում է պետական փոխհատուցում: Դրա չափը սահմանվում է «Վրաստանի նախկին բարձրաստիճան քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանության երաշխիքների մասին» Վրաստանի օրենքով:

Հարց. *Քսանհինը տարեկան եմ, վախճանվեց ներքին գործերի նախարարության համակարգում աշխատող ամուսինս: Ունենք երեք անչափահաս երեխա: Խնդրում եմ պարզաբանել՝ ո՞ւմ դիմել երեխաների համար թոշակ նշանակելու հարցով:*

Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Թբիլիսի

Պատասխան. Ելնելով հարցում ներկայացված պայմաններից՝ հոր մահվան կապակցությամբ անչափահաս երեխաներին փոխհատուցման եւ ոչ թե թոշակի նշանակման հարցով խորհուրդ ենք տալիս դիմել սոցիալական սպասարկման գործակալություն՝ Թբիլիսի, Ակակի Ծերեթելու պողոտա, թիվ 144 հասցեով:

ՀԱՐՑ. *Օրենքի համաձայն, ի՞նչ իրավունքներ են վերապահվում տուժյալին այն դեպքում, երբ նա դարձել է կնքած պայմանավորվածության զոհը: Նման դեպքերում, վերապահվո՞ւմ են, արդյոք, փոխհատուցման հնարավորությունները:*

Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ախալցիխե

ՊԱՏԱՍԽԱՆ. Կեղծիքի դեպքում, տուժյալ կողմն իրավասու է պահանջել պայմանավորվածության անվավեր ճանաչում եւ վնասի փոխհատուցում: Նշանակալից է, որ խաբեությամբ կնքված պայմանավորվածության անվավեր ճանաչման համար նշանակություն չունի, թե պայմանավորվածությունը վերաբերում է առանձին որեւէ առարկային կամ պայմանավորվածությանը, որը կարող էր ազդեցություն գործել պայմանավորվող կողմերի վրա: Խաբեությամբ կնքված պայմանավորվածության փոփոխման իրավունքի ժամկետը սահմանված է մեկ տարի, իսկ սխալմամբ կնքված պայմանավորվածության ժամկետը սահմանափակված է ընդամենը մեկ ամսով:

Ð²ðò – ä²î²êÊ²Ü * ²ÚÈ²¼²Ü * ÊàðÐàôð¸Üºð

² è àÔ æ ² ä ² Ð àô Â Ú àô Ü

ՍՆՆԴԱՅԻՆ ԱԼԵՐԳԻԱ



Ամանորի եւ ընդհանրապես տոների մշտական ուղեկիցը սննդային ալերգիան, իմ ամենապարածված հիմնախնդիրն է: Ինչպե՞ս ապահովագրվել դրանից:

Ա.Մնացականյան

Բոլնիսի

Կարծրացած այն կարծիքը, որ շոկոլադն ու նարինջը ալերգիա են առաջացնում, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը:

Ալերգիա առաջացնող մթերքների շարքում շոկոլադը ցուցակի վերջին հորիզոնականներում է, իսկ նարինջն ընդհանրապես չի ընդգրկված:

Առավել հաճախ ալերգիա առաջացնող մթերքներն են հավի ձուն, կաթը, ձուկն ու ձկնամթերքը, ընկուզեղենը, նաեւ մսամթերքը, լոբազգիները, տարբեր մրգեր ու բանջարեղեններ:

Ալերգիայի զարգացումը կանխելու ամենահիմնական ձեւը ալերգիա առաջացնող մթերքը կերակրացանկից հանելն է: Մթերքների նկատմամբ ալերգիան շատ անհատական բնույթ ունի: Դրանից կարելի է ազատվել միայն բժշկի հսկողության ներքո:

ú¶î²Î²ð Êàðð Ðàôð¸

ԱՉՔԵՐԻ ՀՈԳՆԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ



Վերջերս փեսողությանս հետ կապված հիմնախնդիրներ են ծագել: Ծանոթներս ասացին, որ դա երկար ժամանակ համակարգչի առջեւ նստելուց է առաջանում: Նաեւ ասացին, որ համակարգչի մոտ կակտուս ունենամ, եւ որ դա օգնում է: Իսկ հիմա ի՞նչ անեմ աչքերիս հոգնածությունը վերացնելու համար:

Ս.Միրաքյան

Նինոծմինդա

Մենք շատ ժամանակ ենք անցկացնում համակարգչի, հեռուստացույցի առջեւ, ինչը, բնականաբար, բացասական ազդեցություն է թողնում աչքերի վրա: Աչքերի հոգնածությունը կարող է պատճառ դառնալ տեսողության վատթարացման, ներակնային ճնշման բարձրացման:

Թանզիֆե 2 փոքրիկ տոպրակների մեջ մանր կտրտած մաղադանոս լցնել եւ տոպրակներն իջեցնել տաք ջրի մեջ: Երբ հեղուկը հոսի, եւ տոպրակները փոքր-ինչ հովանան, դրանք 3-4 րոպեով դնել փակ աչքերին: Այնուհետեւ, աչքերին սառը ջրում թրջած խծուծներ դնել: Այս գործողությունն օգնում է աչքերի հոգնածության եւ անքնության պատճառով բորբոքման դեպքում:

Շատ օգտակար է մաղադանոսի եփուկով թրջոցը:

50 գ կանաչին 15 րոպե եփել 0,5 լ ջրում, քամել: Բամբակե խծուծները թրջել գոլ եփուկի մեջ եւ 1-2 րոպե դնել փակ աչքերին: Գործողությունը կրկնել 3-4 անգամ: Վերջում սառը թրջոց դնել, մաշկը չորացնել եւ յուղոտ քսուքով պատել:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ԱՇԽԱՐՀՈՒՄ ՍԻՐՎԱԾ ՏԱՍԸ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Trivago տուրիստական ծառայությունը հրապարակել է աշխարհի տասը քաղաքներից բաղկացած Global Reputation Ranking-ի ցուցակը, որոնք 2015 թվականին ստացել են ճանապարհորդների լավագույն գնահատականները: Այդ ցուցակի առաջին հորիզոնականում թուրքական Գյորեմն է՝ Կապադովկիայում:



Ըստ հրատարակության տվյալների, քաղաքի գործակիցն ամենաբարձրն է՝ 88,03: Երկրորդ տեղում իտալական Մատերան է, որը 2014 թվականին հայտարարվել է Եվրոպայի 2019 թվականի մշակութային մայրաքաղաքը (նրա վարկանիշը 87,48 բալ է): Առաջատարների եռյակը եզրափակում է Տոսկանայում գտնվող Սան Ջիմինյանոն, որը հավաքել է 85,98 բալ: Ցուցակում տեղ են գտել նաեւ բրազիլական Գրամադու քաղաքը, Հանոյը (Վիետնամ), իտալական Լեչչեն, Սիեմրեապը (Կամբոջա), իռլանդական Քիլառնին, Սորենտոն (Իտալիա) եւ Ֆունշալը (Մադեյրայի գլխավոր նավահանգիստը):

Ինչպես նշում է «Ռամբլեր. Ճանապարհորդություն» ծառայությունը, տասը քաղաքները պորտալի կողմից ընտրվել են 250 հավակնորդներից: Ընդ որում, հաշվի են առնվել ճանապարհորդների 200 հազարից ավելի արձագանքներ: Global International Ranking-ը դիտարկել է միայն այն քաղաքները, որոնք ավելի քան 130 հյուրանոցային կառույցներ ունեն:

ԱՌՕՐՅԱ ՀԱՐՑԵՐ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Ետեւում մնացին Ամանորի եւ Ծննդյան տոները ու դրանց անցկացման հետ կապված հոգսերը: Առաջնային պլան մղվեց առօրյա հարցերի կարգավորման համար անհրաժեշտ միջոցների ապահովման հարցը: Ինչպե՞ս բաշխել ընտանեկան բյուջեն, ո՞ր ծախսերն են առաջնահերթային... Այս եւ մյուս հրատապ հարցերին է նվիրված ստորեւ ներկայացվող նյութը:



Ի՞նչ է բյուջեն.

Պարզ ասած՝ բյուջեն բոլոր եկամուտների եւ ծախսերի հաշվառումն է որոշակի ժամանակաշրջանի համար: Պայմանականորեն բյուջեն կարելի է պատկերացնել մի քանի սյունակ ունեցող աղյուսակի տեսքով:

Ամենապարզ տարբերակում սյունակների թիվը չորսն է. առաջինում գրվում է հերթական համարը, 2-րդում՝ կարգի անվանումը (օր.՝ աշխատավարձ): 3-րդում, որը կոչվում է «Պլան», գրվում են գումարները, որոնք նախատեսվում են ծախսել որոշակի ժամանակահատվածում: Իսկ 4-րդ՝ վերջին սյունակում արձանագրվում է բյուջեի փաստացի կատարողականությունը, այսինքն՝ փաստացի ինչքան է ծախսվել տվյալ շրջանում:

Բյուջեն բաժանվում է երկու մասի՝ եկամտային եւ ծախսային: Եկամտային մասում գրանցվում են բոլոր մուտքերը, որոնք ակնկալվում են ստանալ որոշակի շրջանում: Ծախսային մասում, համապատասխանաբար, նշվում են ենթադրվող ծախսերը: Գումարները, ըստ կարգերի բաժանելուց հետո, պետք է անպայման ստուգել՝ արդյոք ծախսային մասը չի՞ գերազանցել եկամտայինը: Եթե ծախսերը գերազանցում են եկամուտները, ապա լուծման երկու տարբերակ կա. կամ կրճատել ծախսերը, կամ փնտրել ֆինանսի նոր աղբյուր:

Ինչպե՞ս պլանավորել ընտանեկան բյուջեն.

Ինչպե՞ս կարելի է առեւտրային ընկերություններում օգտագործվող բյուջետային տեսությունը կիրառել ընտանիքում: Շատ պարզ: Նստում ենք համակարգչի առաջ եւ 2 աղյուսակ (եկամտային եւ ծախսային) գծում՝ համապատասխան կարգերով:

Անցնենք բյուջեի ծախսային մասին: Ծախսերի հետ կապված միշտ որոշակի դժվարություններ են առաջանում: Եթե բնակարանի վարձի եւ այլ կոմունալ վճարների գումարը, ըստ էության, հստակ է, ապա դժվար է հաշվել, թե ամսվա կտրվածքով որքան գումար կծախսվի հացի կամ կաթի վրա:

Բնական է, որ ծրագրված ծախսերի գումարը մոտավոր կլինի, կարեւորը կոնկրետ սահմանափակում մտցնելն է: Հաշվառման վերջին կարգում նշվում է, թե ընդամենը որքան գումար կարող է ձեր ընտանիքը ծախսել գալիք ամսվա ընթացքում:

Եթե ձեր ընտանիքը նախընտրում է խնայել խոշոր գնումների համար եւ չի օգտվում ապառիկ տարբերակից, ապա, բյուջեն կազմելիս, գծեք եւս մեկ կետ՝ «Խնայողություններ»: Այս կետի գումարները աճման կարգով գրանցեք առաջիկա ամիսների պլանում, մինչեւ հավաքվի անհրաժեշտ դրամը:

Եվս մեկ անհրաժեշտ կետ՝ «Ռեզերվ»: Ընտանեկան բյուջեն պարտադիր պետք է նախատեսի գումար չնախատեսված ծախսերի համար՝ լինի չծրագրված ծախս, թե դրամ շտապ բուժման եւ այլ ծայրահեղ իրավիճակների համար:

Այժմ հաշվենք, թե կբավարարե՞ն ստանալիք եկամուտները ենթադրվող ծախսերի համար: Դրա համար «Ընդհանուր եկամուտ»-ից հանեք «Ընդհանուր ծախսեր», «Խնայողություն» եւ «Ռեզերվ» բաժինների գումարը: Եթե մնացորդը բացասական է, մտածեք՝ ի՞նչ անել. հրաժարվե՞լ որոշ գնումներից, վա՞րկ վերցնել, թե՞ գործ փնտրել «կողքից»:

Արդյոք պահպանո՞ւմ եք բյուջեն, թե՞ ոչ, կարող եք իմանալ՝ ամենօրյա ծախսերի գրանցում կատարելով: Եթե օգտվում եք համակարգչից, այս հարցում ձեզ կօգնեն X-Cash «Ընտանեկան բյուջե», «Home Station 1.2.», «Հաշվապահություն տան համար» կամ «AceMoney Lite» ծրագրերը:

(Շարունակությունը հաջորդ համարում)

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ես բամբասողին չեմ ատում այնքան, որքան որ՝ նրան հավատացողին:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ
(1936-2013)
Հայ գրող, երգիծաբան

Շատ դժվար է, երբ ծարավին աղի ջուր է հանդիպում:

ԲԵՍԻԿԻ
(1750-1791)
Վրաց բանաստեղծ

Երբ ցանկանում ես քնել, աչքերդ մի' փակիր առանց վերլուծելու ավարտված օրվա քո բոլոր արարքները:

ՊԼԱՏՈՆ
(մ.թ.ա.427-մ.թ.ա.347)
Հին հույն փիլիսոփա

Ինքն իրենով խաբված լինելն ամենից վատ է, որովհետեւ այդ դեպքում խաբողը միշտ ներկա է խաբվողի կողքին:

ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍ
(մ.թ.ա.570-մ.թ.ա.490)
Անտիկ մաթեմատիկոս, փիլիսոփա

Այն մարդը, որը մտածում է միայն իր մասին եւ ամեն ինչում փնտրում է իր օգուտը, չի կարող երջանիկ լինել: Եթե ցանկանում ես ապրել քեզ համար, ապրիր ուրիշների համար:

ՆԻՑՇԵ
(1844-1900)
Գերմանացի փիլիսոփա, բանաստեղծ

Ավելի օգտակար է իմանալ մի քանի իմաստուն կանոններ, որոնք միշտ կարող են քեզ ծառայել, քան շատ բան սովորել, որոնք քեզ անօգտակար են:

ՍԵՆԵԿԱ
(մ.թ.ա.4-65)
Հռոմեացի փիլիսոփա

Երջանկությունը մարդուն երբեք չի դրել այնպիսի բարձրության վրա, որ նա բարեկամի կարիք չունենա:

ԴԻԴՐՈ
(1713-1784)
Ֆրանսիացի փիլիսոփա, մատերիալիստ

Մարդը գրելիս ավելի անկեղծ է, քան խոսելիս, քանի որ այդ պահին նրան ոչ մեկը չի լսում:

ՔՆԱՐԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

² Ü º Î ¸ à î Ü º ð

** Բժիշկը հարցնում է հիվանդին.*

- Օգտվեցա՞ք տված դեղեն:

- Այո, պարոն բժիշկ, կատարելապես առողջացած եմ:

- Ուրեմն ես էլ օգտվիմ այդ դեղեն, որովհետեւ տառապում եմ նույն հիվանդությամբ:

** - Եթե ամուսնանանք, զիս շա՞տ պիտի սիրես:*

- Անշուշտ: Չէ՞ որ ամուսնացած կիները ես շատ կսիրեմ:

** - Հայրիկ, չեմ ուզեր այդ դպրոցը երթալ:*

- Ինչո՞ւ, տղաս:

- Ուսուցչուհին բան մը չի գիտեր: Ամեն ինչ մեզի կհարցնե:

** Բախտագուշակ մը կըսե հաճախորդին.*

- Մինչեւ 32 տարեկան ախքատ ու դժբախտ պիտի ըլլաս:

- Եվ հետո՞...

- Հետո կվարժվիս:

** Ուսուցչուհին հետեւյալ նյութը կուտա շարադրության համար. «Պատմեցեք, թե ինչ պիտի անեք, երբ ամուսնանաք»:*

Թոթոն երկարորեն կմտածե, ապա պարապ թուղթը կուտա ուսուցչուհուն:

- Ինչո՞ւ բան մը չես գրած,- կհարցնե ուսուցչուհին:

- Որովհետեւ պատմելիք բաներ չեն ատոնք...

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով, մի շարք բնագավառներում շնորհվել են Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական մրցանակները: Հունվարի 20-ին նախագահի նստավայրում տեղի է ունեցել մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը:

Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական մրցանակներ են շնորհվել գրականության ու արվեստի, ճարտարապետության եւ քաղաքաշինության, ճշգրիտ ու բնական գիտությունների բնագավառներում, շուրջ 15 գործիչների:

Այս տարի մրցանակներ չեն շնորհվել կերպարվեստի ոլորտում, թատերական արվեստի ոլորտում, ինչպես նաեւ հումանիտար ու հասարակական գիտությունների բնագավառներում, որոնց հանձնախմբերի նախագահների տեղեկացմամբ, հիշյալ ոլորտներում 2015թ. ՀՀ պետական մրցանակի ներկայացված աշխատանքները, հանձնաժողովի անդամների փակ գաղտնի քվեարկության արդյունքում, չեն հավաքել բավարար քանակի ձայներ:

Պետական մրցանակները հանձնելուց հետո, հանրապետության նախագահը իր շնորհավորական խոսքն է հղել բոլոր մրցանակակիրներին:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՋՆԱՀԵՐԹԱՅԻՆ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի նախագահությամբ, Բրյուսելում կայացած Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության խորհրդի 16-րդ նիստի ժամանակ ԵՄ-ն վերահաստատել է, որ ԼՂ հակամարտությունում առկա ստատուս-քվոն անընդունելի է:

«Եվրամիությունը վերահաստատել է, որ ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորումը շարունակում է առաջնահերթություն մնալ ԵՄ-ի համար: Անվտանգության հարցը շփման գծում եւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ միջազգային սահմանին լուրջ մտահոգության առարկա է: ԵՄ-ն վերստին զսպվածության կոչ է անում ու վերահաստատում իր աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ իրականացվող բանակցային գործընթացին՝ ուղղված հակամարտության կարգավորմանը: Այն խրախուսում է ապագայում Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների մակարդակով երկխոսության իրականացումը»,- ասվում է ԵՄ հաղորդագրության մեջ՝ ընդգծելով, որ Եվրամիությունն առաջիկայում էլ պատրաստակամ է աջակցել խաղաղարար առաքելություններին:

ԾՐԱԳՐՎՈՒՄ Է 1,7-2,2 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Հայաստանի ՀՆԱ-ն 2016թ. կկազմի 1,7-2,2 տոկոս (ըստ կոնսենսուս-կանխատեսման՝ 2,2 տոկոս)՝ 2015թ.-ին սպասվող 2,5-2,7 տոկոսի (ըստ վերանայված կոնսենսուս-կանխատեսման՝ 2,3 տոկոս) դիմաց:

Այս մասին նշվում է Զարգացման եվրասիական բանկի «ԱՊՀ մակրոմոնիտոր» եռամսյակային մակրոտնտեսական հրապարակման մեջ:

Ըստ բանկի փորձագետների, Հայաստանի ՀՆԱ-ի աճի հեռանկարները անորոշ են արտաքին խոցելիության աստիճանի մեծացման պատճառով: Արտահանումը եւ արդյունահանող ու վերամշակող արդյունաբերության ցուցանիշների աճը կխոչընդոտեն Ռուսաստանի տնտեսության վերականգնման հետ կապված անորոշությունը, Եվրոպայում աճի ցածր տեմպը, տարածաշրջանում բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը, մետաղների ցածր գները, որոնք կզուգակցվեն դրամի փոխարժեքի իրական ամրապնդումով: Արտահանման վրա դրական ազդեցություն կարող է ունենալ ԵԱՏՄ երկրներ եւ այլ ուղղություններով արտահանման երթուղիների ընդլայնումը:

ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՒՆՎԱՐԻ 19-ԻՆ՝ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ 9-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

Պոլսահայ լրագրող, «Ակոս» պարբերականի հիմնադիր եւ գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանության իններորդ տարելիցի առնչությամբ հիշատակի արարողություններ անցկացվեցին աշխարհի տարբեր երկրներում:

Հունվարի 19-ին Ստամբուլում գործող «Նոր զարթոնք» հասարակական կազմակերպությունը եւ «Հրանտ Դինք» հիմնադրամը Երեւանի քաղաքապետարանի մոտ ստորագրահավաք անցկացրեցին՝ Երեւանի փողոցներից մեկը Դինքի անունով կոչելու նպատակով: Հրանտ Դինքի հիշատակին նվիրված ակցիան ավարտվեց Հանրապետության հրապարակում՝ մոմավառությամբ:

Հունվարի 19-ին հիշատակի արարողություններ անցկացվեցին Թուրքիայի երեք քաղաքում՝ Ստամբուլում, Անկարայում եւ Բուրսայում: Ստամբուլում «Հրանտի ընկերներ»-ը ծաղիկներ դրեցին «Սեդաթ» շենքի դիմաց, հենց այն վայրում, որտեղ ինը տարի առաջ այս օրը սպանվել էր պոլսահայ լրագրողը: Շենքի վրա փակցվել է «Ախպարի'կ, կարոտով, զայրույթով, համառորեն այստեղ ենք» գրությամբ ցուցանակը:

Հիշատակի միջոցառումներ անցկացվեցին նաեւ Գերմանիայի Բեռլին ու Քյոլն, Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքներում:

Կանադայի մայրաքաղաք Օտտավայում հիշատակի արարողությունը տեղի կունենա հունվարի 24-ին, իսկ Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում՝ փետրվարի 8-ին:

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՐՏԱՀԱՅՏԱԾ ՄՏՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրային խորհուրդը հայտարարություն է տարածել Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլի կողմից հունվարի 7-ին «Ռոսիա» հեռուստաընկերության եթերում հեռուստալրագրող Դմիտրի Կիսիլյովի հետ հարցազրույցի ընթացքում Օսմանյան կայսրության հպատակների վերաբերյալ արած արտահայտության վերաբերյալ:

Ինչպես նշված է հայտարարությունում, Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնված ազգերի շրջանում տարակուսանք է առաջացրել Պատրիարքի այն պնդումը, թե Օսմանյան կայսրությունն իր հպատակների համար եղել է կարգուկանոնի ու խաղաղության երաշխավոր: «Անհրաժեշտություն չկա մեկ անգամ եւս անցնել օսմանյան պատմության արյունալի արահետով, որը մինչ օրս չսպիացող վերքեր է թողել Բալկաններում, Կովկասում ու Մերձավոր Արեւելքում: Այդ վերքերը վստահորեն կարելի է կոչել սուլթանների եւ երիտթուրքերի կողմից վարած անմարդկային քաղաքականության ու իրականացրած ցեղասպանությունների վկայություն:

Իրենց պատմական հայրենիքում 1,5 միլիոն քրիստոնյա հայերի, ինչպես նաեւ հույների ու ասորիների ցեղասպանությունները, ողջ քրիստոնյա բնակչության եւ նրա ստեղծած հարուստ ժառանգության ոչնչացումն ու թալանը Օսմանյան կայսրության եւ ժամանակակից Թուրքիայի տարածքում պատմական փաստ է, որը կասկածի կամ ժխտման ենթակա չէ: Ավելին, Հայոց ցեղասպանությունն ուղեկցվում էր հայրենազրկմամբ իր պատմական, Աստծո կողմից տրված Հայրենիքից:

Օսմանյան կայսրությունը եղել է, իսկ ժամանակակից Թուրքիան այսօր էլ Ռուսաստանի աշխարհաքաղաքական հակառակորդն է, եւ դրա վառ ապացույցն են Սիրիայի վերջին իրադարձությունները:

Համոզված ենք, որ Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների ու մահմեդականների համակեցության եւ հանդուրժողականության վերաբերյալ պատրիարք Կիրիլի կողմից հեռուստաեթերում հնչեցրած անհաջող օրինակը պարզապես վրիպում է՝ հեռու ճշմարտությունից ու արդարությունից»,- ասված է հայտարարության մեջ:

ԱՐՑԱԿՈՒՐԴՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ ԵՆ ՄԻՆՉԵՎ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ը

Հայաստանի առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը վարչապետ Հովիկ Աբրահամյանին ներկայացրել է, որ վերջին օրերի ընթացքում հանրապետությունում իրականացված սուր շնչառական վարակների եւ գրիպի մշտադիտարկման արդյունքներով իրավիճակը կայուն է: Արձանագրվում է ծանր դեպքերի նվազում: Շարունակվում են կանխարգելիչ ու բուժական գործողությունները:

Հաշվի առնելով վարակի տարածման գործում լայնածավալ շփումների սահմանափակման կանխարգելիչ մեծ նշանակությունը՝ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, առողջապահության նախարարությունը ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ տարածքային ու արտակարգ իրավիճակների նախարարություններին, Երեւանի քաղաքապետարանին առաջարկել է կայունացման միտումը պահպանելու նպատակով եւս մեկ շաբաթով երկարաձգել հանրակրթական, նախնական եւ միջին մասնագիտական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ֆմեռային արձակուրդները:

Միաժամանակ առաջարկվել է, որպեսզի շաբաթ եւ կիրակի օրերին պոլիկլինիկաներում ու ամբուլատորիաներում հերթապահություններ սահմանվեն:

ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՀՈՐԻԶՈՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԼԻԻՐԱՎ ԱՆԴԱՄ

Հայաստանն այս տարի «Հորիզոն-2020» եվրոպական գիտական ծրագրի լիիրավ անդամ երկիր է:

Ինչպես նշեց, Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը. «Համաձայնագրի ֆորմալ ստորագրման գործընթացը դեռեւս տեղի չի ունեցել, բայց Եվրամիության հետ բանակցությունները հանգեցրին նրան, որ 2016-ից, անգամ մինչ համաձայնագրի ստորագրումը, Հայաստանի գիտնականները կարող են լիարժեք մասնակցել ծրագրին:

Եվրոպական Միության «Հորիզոն 2020»-ի շրջանակում ՀՀ գիտական համակարգը կընդգրկվի դրամաշնորհային տարբեր ծրագրերում՝ ապահովելով ֆինանսական հոսքեր գիտության ոլորտում:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԳԱԶԻ ԳՆԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՐՑՈՎ

Հայաստանի կառավարությունը դիմել է Ռուսաստանին՝ Հայաստան մատակարարվող գազի սակագինը վերանայելու հարցով: Բանակցություններն այս պահին շարունակվում են: Հունվարի 21-ին լրագրողների հետ հանդիպմանն այս մասին ասաց ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանը: «Մենք գիտակցում ենք այդ հարցի կարեւորությունը եւ, ելնելով դրանից, դիմել ենք Ռուսաստանին՝ Հայաստան մատակարարվող գազի սակագինը նվազեցնելու հարցով: Բանակցություններն այս պահին ընթանում են»,- նշեց Ե.Զախարյանը:

ԿԵՍ ՄԻԼԻՈՆ ՍՊԱՌՈՂ ՕԳՏՎԵԼ Է ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄԻՑ

2015թ. դեկտեմբերին ծախսված էլեկտրաէներգիայի համար սուբսիդավորման ենթակա գումարը կազմել է ընդհանուր առմամբ շուրջ 451,1 մլն դրամ: Դեկտեմբերին բնակիչ-սպառողների գրեթե 60 տոկոսը օգտվել է փոխհատուցումից:

Այդպիսի սպառողների թիվը եղել է ավելի քան 459 հազար: Այդ ամսին ծախսված էլեկտրաէներգիայի դիմաց բնակիչ-բաժանորդներին տրամադրված սուբսիդավորման ենթակա գումարը կազմել է ավելի քան 431 մլն դրամ: Անցած հինգ ամիսներին, ընդհանուր առմամբ, տրամադրվել է շուրջ 3,5 մլրդ դրամի փոխհատուցում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆՎԱՐ

23.01.2016. Սուրբ Սարգսի տոն

26.01.2016. Սուրբ Սուքիասյանց վկաների հիշատակության օր

28.01.2016. Սուրբ Ոսկյանց քահանաների հիշատակության օր

30.01.2016. Սուրբ Սահակ Պարթեւ Հայրապետի տոն

Սուրբ Իսահակ Հայրապետը Ներսես Մեծ կաթողիկոսի որդին էր, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի վերջին ներկայացուցիչը, որ 387 թվականից սկսած 52 տարի եղել է Հայոց հայրապետական աթոռի գահակալը: Լինելով կրթված եւ հմուտ երաժշտական, հռետորական արվեստների, իմաստասիրության ու լեզվագիտության մեջ, Սահակ Պարթեւը մեծ նպաստ է բերել հայ ազգային մշակույթի զարգացմանը, եղել հայոց գրերի ստեղծման ջատագովը, Մեսրոպ Մաշտոց վարդապետի հետ դարձել հայ դպրության ու եկեղեցական մատենագրության հիմնադիր: Տառերի գյուտից հետո, Սուրբ Սահակն ու Սուրբ Մեսրոպը սկսում են Աստվածաշնչի թարգմանությունը եւ այնպես կատարյալ կերպով են կատարում այն, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը դարեր հետո կոչվում է Աստվածաշնչի թարգմանությունների թագուհի:

ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՋԱՂԵԿ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԻՍԻ 1-Ը

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի իրավաբանական կոմիտեի նախագահ Վախթանգ Խմալաձեն, աջաղեկ մեքենաների գրանցման արգելքը մարտի 1-ից հետաձգվել է մինչեւ հունիսի 1-ը:

Նրա խոսքերով, այդ հարցով կառավարության եւ խորհրդարանի միջեւ ձեռք է բերվել պայմանավորվածություն, որի պատճառն այն է, որ մարտի 1-ի համար ֆիզիկական անձանց կամ դիլերների մոտ կարող են լինել նման մեքենաների չավարտված գործընթացներ: Միաժամանակ, ինչպես նշեց Խմալաձեն, խորհրդակցություններ են տարվում համեմատաբար նոր մեքենաների մաքսազերծման չափերի նվազեցման ե'ւ 12, ե'ւ ավելի տարվա արտադրության ավտոմեքենաների հարկի ավելացման ուղղությամբ:

ՖՈՒՏԲՈԼ

ԱՆՆՇԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ՝ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՆՈՐ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ընթացիկ տարվա վարկանիշային անդրանիկ աղյուսակը:

Նոր տվյալներով, թե' Վրաստանի եւ թե' Հայաստանի հավաքականները առաջադիմել են 2-ական հորիզոնականով եւ հանգրվանել, համապատասխանաբար, 120 եւ 121-րդ տեղերում:

Վարկանիշային աղյուսակը գլխավորում է Բելգիայի հավաքականը: Առաջատարին հետեւում են Արգենտինայի ու Իսպանիայի հավաքականները:

Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Գերմանիայի, Չիլիի, Բրազիլիայի, Պորտուգալիայի, Կոլումբիայի, Անգլիայի եւ Ավստրիայի հավաքականները: Ռուսաստանի հավաքականը 24-րդն է, Ադրբեջանինը՝ 116-րդը:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի տեղեկատվությամբ, առատ ձյան եւ մերկասառույցի պատճառով, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհի Գուդաուրի (Փոստա)-Կոբա ճանապարհահատվածով կիսակցիչներով տրանսպորտային միջոցների եւ 30 ու ավելի տեղանոց ավտոբուսների երթեւեկությունը թույլատրելի է անվաշղթաների առկայության պայմաններում, իսկ տրանսպորտային մյուս միջոցների համար երթեւեկությունը բաց է:

Բնապահպանության ազգային գործակալության տեղեկատվությամբ, Գուդաուրի (Փոստա)-Կոբա ճանապարհահատվածում երթեւեկությունը իրականացվում է առանց կանգառման ռեժիմով, միայն սողանքապաշտպան թունելների անցմամբ:

Օդերեւութաբանական բարդ պայմանների (ուժեղ ձյունամրրիկներ եւ վատ տեսանելիություն) պատճառով, Կոդա-Փարցխիսի-Մանգլիսի-Ծալկա-Նինոծմինդա ավտոմոբիլային ճանապարհի լեռնանցքային հատվածում (Նարդեւան-Ռոդիոնովկա (Փարվանա) ճանապարհահատվածի 94-110կմ) բոլոր տեսակի ավտոտրանսպորտային միջոցների երթեւեկությունն արգելված է:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 2.Ձիու ձայնը: 5.Արեւադարձային ծառ: 9.«... ու միտք կտանեն մարդու Վրաստանա գյոզալները» (Ն.Հովնաթան): 11.... Ժիգլով: 12.Ամերիկացի բնիկ: 13.«... ու անտուն մնայի» (ժող.երգ): 14.Ռուսաստանի հայերի միության նախագահ ... Աբրահամյան: 15.Ճաշատեսակ: 19.Սանտա ...: 22.Տված ...ը լավ չմարսեց: 27.Լիճ Հայաստանում: 28.Գրություն սահմանը հատելու համար: 32.Համ: 34.Դերասան Ռոբերտ դե ...»: 35.... Մելքոնյան (ղարաբաղյան ազատամարտիկ): 37.... ու պատասխան: 38.Աչք եւ ...: 40.Փոխադարձ դերանուն: 41.Խիղճ, հոգի: 42.Քաղաք Սաուդյան Արաբիայում: 44.Ամայի, անմշակ, անմարդաբնակ: 45.Գրազ (բրբ.): 48.Հերոսուհի «Որոգայթ» ֆիլմում: 49.Հարկ, տուրք: 51.Ցնցոտի, հին, մաշված հագուստ: 52.Վարպետ, իր գործում հմուտ: 55.Գերեզմանատուն Փարիզում ... Լաշեզ: 57.Հաղորդավարուհի ... Շլեպչյան: 59.Կղզի Միջերկրական ծովում: 61.Խոզի ձագը: 64.Հայի ազգանվան վերջում: 65.Դո, ռե, մի, ... 67.Հերոսուհի «Խոպանի տեսություն» ֆիլմում: 68.Հարավ-Արեւմտյան Ասիայի բնակիչ: 69.Աֆրիկյան բնիկները: 71.Լարային երաժշտական գործիք: 74.Հին զենքի տեսակ: 75.Տարվա եղանակ: 76.Ձիվան Գասպարյանի նվագարանը: 78.Հայ երգչուհի ... Գեւորգյան: 79.Երիտասարդ ծառ: 80.Ոսկուց պատրաստված: 83.Ընտանի կենդանի: 84.Գրող ... Արագոն: 86.Գործվածքի տեսակ: 89.Մենք մրսենք, նրանք ...: 92.... ու ծանակի ենթարկել: 93.Ստորադասական շաղկապ: 94.Չսքողված, չծածկված:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Տարիք, տարիներ: 2.Բուլղարուհի պայծառատես: 3.Հիվանդություն: 4.Երաժշտական գործիք: 5.Մաս, թիքա, կտոր: 6.Ամայի, մերկ, ողորկ: 7.Կիսաթանկարժեք քար: 8.Անգլիացի արկածային գրող Դանիելը: 10.Հայ արվեստագետ-լուսանկարիչ, Կանադայի համալսարանի դոկտոր Հովսեփ ...: 16.Հայտնի երգչուհի ... Լեւոնյան: 17...., անցյալ, ապառնի: 18.Լիտենշտեյնի գլխավոր քաղաքը: 20.... անասուն: 21.Արեգակնային համակարգի մոլորակ: 23.Այցելություն, տեսություն: 24.Յասոնի նավը: 25.Թբիլիսյան բանկ: 26.Բարիքի հականիշը: 29.Նոր ծնված, նորելուկ: 30.Ամուր բազուկներ ունեցող: 31.... եւ Անուշ Արշակյաններ: 33.Նամակի «հագուստը»: 36.Թբիլիսյան աշուղ ... Գյուրջի: 37.Ատաղձ, որեւէ գործի համար նախատեսված նյութեր: 39.Կամակոր, իրասածի: 43.Ալ.Շիրվանզադեի վեպը: 46.Ավ.Իսահակյան «...ի սերը»: 47.Տաք, ջերմություն: 50.Կրկեսի հրապարակը: 53.Եռալեզու աշուղ, գուսան, բանաստեղծ ...-Նովա: 54.Աչքի ընկնող, հանրահայտ: 56.Սթափ, զգաստ: 58.Ավ.Իսահակյանի թոռը (անունը): 60.Գրանտ ...: 62.... Օրի: 63.Փողոցի եռագույնը վարորդների համար: 66.Հերոս «Վարդանանք» վեպում: 70.Անուրջ, ցնորք, իղձ: 72.Մասնիկ արաբական ազգանուններում: 73.Սպորտային ֆիրմա: 77.Դրվածը, պահվածը: 78.Այծերի խմբի առաջնորդը: 79.Հայոց տոմարի նոյեմբերը: 81.Մորմ: 82.Թռչունների խումբը: 85.Հարցական դերանուն: 87.Ցուրտ, սառը: 88.Գրող էդգար Ալան ...: 90.Ցուցական դերանուն: 91.Երրորդ դեմքի անձնական դերանուն:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ N 96-97 ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 9.Տամա: 10.Ճակատագիր: 11.Բազե: 12.Մանգաղ: 13.Նուկրի: 14.Գրիվնա: 19.Լենդլեր: 23.Սպինոզա: 24.Մանանեխ: 25.Նիգերիա: 26.Սենտավո: 27.Վարսանդ: 29.Վիվալդի: 34.Կախարդ: 36.Էրոսի: 37.Շայբոն: 38.Ջուբր: 39.Կատակերգու: 40.Վալս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ստամոքս: 2.Մանգո: 3.Պճեղ: 4.Բաբուին: 5.Կապրալ: 6.Ճրագ: 7.Աբրիս: 8.Մեծաձախ: 15.Ուլանովա: 16.Արմավիր: 17.Ռիոնի: 18.Խոզան: 20.Դիետա: 21.Անդրի: 22.Անգար: 26.Սարկազմ: 28.Դմանիսի: 30.Վարկած: 31.Լասկեր: 32.Մայրի: 33.Այովա: 35.Դեկա: 37.Շշուկ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445